ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30-Ա

«26» նոյեմբերի - 2018թ. — թիվ 10 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30 -ի թիվ 10 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Վարդան Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
նոյեմբերի 30-ի թիվ 10 արտահերթ
նիստի N 30-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1) Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2) Համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

3) Համայնքապետարանի, գրադարանի և գյուղատնտեսության աշխատակազմերի աշխատակիցների 2019 թվականի հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

4) Գումար հատկացնելու մասին.

5) Դրամական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 31-Ն

«26» նոյեմբերի - 2018թ. | թիվ 10 արտահերթ նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ(5 ) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Արամ Գրիգորյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Գուրիկ Գևորգյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Նարեկ Սիմոնյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Վարդան Սիմոնյան | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի «26»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11:30

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
նոյեմբերի 26-ի թիվ 10 արտահերթ
նիստի N 31-Ն որոշման

# ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում սահմանվում են **տեղական տուրքերի** հետևյալ դրույքաչափերը՝

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվածշինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

միչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար** դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **երեսուն հազար** դրամ.

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար** դրամ.

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար** դրամ.

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար** դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **երեք հազար** դրամ.

-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար** դրամ:

2/ համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար** դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների,

շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3/ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4/ համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5/ համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6/ համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ հարյուր դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ հարյուր դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ հարյուր դրամ,
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ հարյուր դրամ,
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ հարյուր դրամ.

7/ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8/ համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

9/ համայնքի վարչական տարածքում մարդատար- տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1/ համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ.

2/ համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

ա. կենցաղային աղբի համար՝

- ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հացեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ութսուն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32-Ա

«26» նոյեմբերի - 2018թ. — թիվ 10 արտահերթ նիստ

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ, ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, 34-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետարանի, գրադարանի և գյուղատնտեսության աշխատակազմերի աշխատակիցների 2019 թվականի հաստիքացուցակները, թվաքանակները և պաշտոնային դրույքաչափերը` համաձայն 1-ի, 2-ի, 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ(5) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | ---------------- |
| Վարդան Սիմոնյան | ------------------- | ------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի «26»
գ. Լուսագյուղ
Ժամը` 12[00]

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
նոյեմբերի 26-ի թիվ 10 արտահերթ
նիստի N. 32-Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 8
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ | ՀԱՎԵԼԱՎՃԱՐ |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 173500 | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 110300 | |
| | | | |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 133600 | 6700 |
| Գլխավոր մասնագետ | 1 | 128500 | 6400 |
| Առաջատար մասնագետ | 2 | 87000 | |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| Հավաքարար | 1 | 72760 | |
| Պահակ | 1 | 72760 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ______________ Մ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
նոյեմբերի 26-ի թիվ 10 արտահերթ
նիստի N 32-Ա որոշման

# ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 1
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ |
|---|---|---|
| Գրադարանավարուհի | 1 | 72760 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ __________ Մ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Էուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
նոյեմբերի 26-ի թիվ 10 արտահերթ
նիստի N 32-Ա որոշման

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 1
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ |
|---|---|---|
| Անասնաբույժ | 1 | 36376 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________ Մ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33-Ա

«26» նոյեմբերի - 2018թ. — թիվ 10 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Վարդան Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի «26»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{30}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
նոյեմբերի 26-ի թիվ 10 արտահերթ
նիստի 33-Ա որոշման

ՑՈՒ Ց Ա Կ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Մասիս Տերտերյանին -80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ.
2) Գևորգ Սարգսյանին - 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.
3) Արմեն Սարգսյանին – 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34-Ա

«26» նոյեմբերի - 2018թ. թիվ 10 արտահերթ նիստ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2018 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 111 ծրագրի «Մեքենաներ և սարքավորումներ ընթացիկ նորոգում և պահպանում» 4252 հոդվածից 70000 /յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել համայնքի ծառայողական ավտոմեքենայի համար ավտոպահեստամասեր ձեռք բերելու համար:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2018 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 111 ծրագրի «Վարչական սարքավորումներ» 5122 հոդվածից 48400 /քառասունութ հազար չորս հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել անխափան սնուցման սարքեր /UPS/ ձեռք բերելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Վարդան Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի «26»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13 00